

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**2019թ. I եռամսյակում ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության վերաբերյալ**

2019թ. I եռամսյակում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 63 առևտրային և 16 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 126-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 3-ի գործունեությունը՝ դադարեցվել:

1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում և 4 հիմնարկ ենթարկվել են ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 275 անհատ ձեռնարկատեր, 46-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 20-ի գործունեությունը՝ դադարեցվել:

Տրամադրվել են 24 սուբյեկտի վերաբերյալ ամբողջական տեղեկություններ:

Ըստ գրասենյակների գրանցման գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

անվանում	իրավաբանական անձ			իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ			անհատ ձեռնարկատեր			Ամբողջական տեղեկությունների տրամադրում	ընդամենը	պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	գործ. դադար.			
<i>Կենտրոնական մարմին</i>	15	15	2դ							1	33	247
<i>Ստեփանակերտ</i>	43	79	1		3		135	24	17	18	320	1656
<i>Ասկերան</i>	3	2			1		21	3	3	1	34	134,5
<i>Հաղբուժ</i>	3	5					21				29	136
<i>Մարտակերտ</i>	2	4					33	7		2	48	166,5
<i>Մարտունի</i>	6	6					46	8		1	67	286
<i>Շուշի</i>	5	8			1		11	2		1	28	171
<i>Քաշաթաղ</i>	2	7					8	2			19	93
<b>Ընդամենը</b>	<b>79</b>	<b>126</b>	<b>1/2դ</b>		<b>5</b>		<b>275</b>	<b>46</b>	<b>20</b>	<b>24</b>	<b>578</b>	<b>2890</b>

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 148 (145/3) տեղեկանք:

Տրամադրվել են իրավաբանական անձանց 2 կանոնադրությունների պատճեններ:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 3 041 000 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում I եռամսյակում արտաբյուջե է մտցվել 634 000 դրամ:

ԱՀ Նախագահի ծրագրից բխող միջոցառումների կատարման շրջանակներում իրականացվել են նախկինում գրանցված (հաշվառված) 31 սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով e-register.am կայքում տեղադրման աշխատանքներ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել ապառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սիստեմատիկ հսկողություն է իրականացվել գործակալության կառուցվածքային ստորաբաժանման նկատմամբ, տրվել ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ:

**Գործակալության պետ**  
Կատարող՝ Բ. Առստամյան

**Գ. Մարսիմովա**